ՀՀ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
ՊԱՏՎԻՐԱՏՈՒԻ ՂԵԿԱՎԱՐԻ
ՈՐՈՇՈՒՄ N 150

ք. Երևան 25-11.2024թ.

ՀՀ պաշտպանության նախարարության և «ՉԻՆԱՐ-ԹԵՔ» ՍՊԸ-ի միջև 24.06.2024թ. կնքված N ՄԱԱՊՁԲ-24-24-1 գնման պայմանագրի (այսուհետև՝ Պայմանագիր) շրջանակներում «ՉԻՆԱՐ-ԹԵՔ» ՍՊԸ-ն Պայմանագիրը կնքելուց հետո 60 օրյա ժամկետում պետք է մատակարարեր 100 լրակազմ ապրանք, որը վերջինս չի մատակարարել:

Հաշվի առնելով, որ «ՉԻՆԱՐ-ԹԵՔ» ՍՊԸ -ն խախտել է պայմանագրով նախատեսված պարտավորություն, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը, հիմք ընդունելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» պարբերության պահանջները, որոշում եմ՝ «ՉԻՆԱՐ-ԹԵՔ» ՍՊԸ-ին ներառել գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում:

Կ. ԲՐՈՒՏՅԱՆ